« 15 » մայիս 2024թ. No 2710 - Ա

«ՇՆՉԱԿԱՆ ԹԵՐԱՊԻԱՆ ԵՎ ԹՈՔԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՄԲ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԻԹԲ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2024թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ԵՊԲՀ Հետբուհական և շարունակական կրթության կենտրոնի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոն՝ «Էրեբունի» ԲԿ, Տիտրոգրադյան փ. 14)

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

- Թիրախային լսարան՝ բուժքույրեր
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-30 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՋ 17 տեսական և 44 գործնական կրեդիտ.

դասընթացավար Հասմիկ Քոչարյանին՝ ՇՄՋ 17 տեսական և 44 գործնական կրեդիտ

- Կոնտակտ 010583101

Շաբաթ 1 **Օր 1**	
10:00-12:00	Նախաթեստ **Դասախոսություն** Անկողնային ռեժիմի ֆիզիոլոգիան: Երկարատև հորիզոնական դիրքում օրգանիզմի տարբեր օրգան-համակարգերի ախտաբանական փոփոխությունները
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:00	**Դասախոսություն** Շնչական համակարգի ախտաբանական փոփոխությունները երկարատև անկողնային ռեժիմի դեպքում և դրանց կանխարգելումը: Շնչական մոնիթորինգ
Օր 2	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Շնչական մոնիթորինգ: Արտաքին շնչառության գնահատում: Շնչառության ռիթմի, խորության և հաճախության խանգարումներ: Ախտաբանական շնչառական տիպեր: Արտաքին շնչառության խանգարումների կառավարման հիմունքները: Պացիենտների գործնական գնահատում ԻԹԲ-ում, տվյալների գրանցում քույրական խնամքի թերթիկում

12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Թոքերի աուսկուլտացիա: Շնչական աղմուկների քույրական ախտորոշում: Թոքերի արհեստական օդափոխությամբ պացիենտների շնչառության գնահատում: Պացիենտների գործնական գնահատում ԻԹԲ-ում, տվյալների գրանցում քույրական խնամքի թերթիկում
Օր 3	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Արյան գազային կազմի գնահատումը: Սատուրոմետրիա: Սատուրոմետրիայի ճշգրտության վրա ազդող գործոնները: Արտաշնչման վերջում ածխաթթու գազի պարցիալ ճնշում, մոնիթորինգի եղանակները: Զարկերակային արյան նմուշառում: Ալենի թեստ: Զարկերակային պունկցիայի բարդությունները, դրանց կանխարգելումը և կառավարումը
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Արյան գազային կազմի վերաբերյալ ստացված արդյունքների վերծանման հիմունքները: ԻԹԲ պացիենտների արյան գազային կազմի վերլուծություն
Օր 4	
10:00-11:30	**Դասախոսություն** Շնչուղիների անցանելիության խանգարումներ. հիմնական պատճառները, կլինիկական արտահայտությունները
11:30-12:00	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Շնչուղիների անցանելիության ապահովման եղանակները և միջոցները: Գլուխը հետ-կզակը վեր գործողություն, ստորին ծնոտի առաջքաշում, բերանային և քթային օդատարների տեղադրում, լարինգեալ դիմակի տեղադրում: Արհեստական շնչառություն Ամբուի պարկի և դիմակի օգնությամբ՝ 1 և 2 հոգով
Օր 5	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Շնչական թերապիա: Հազի խթանում: Խորը շնչառություն: Դրդիչ սպիրոմետրերի կիրառում: Բրոնխալույծ միջոցների ինհալացիա: Կրծքավանդակի բախում: Դիրքային դրենաժ: Գործնականում շնչական թերապիայի միջոցառումների իրականացում ԻԹԲ պացիենտներին
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Թթվածնի լրացուցիչ մատակարարման ցուցումները և մեթոդները: Բոբրովի սարքի կիրառման տեխնիկան: Քթային փողակներ և կաթետերներ: Պարզ դիմակներ: Ոչ հետադարձ կամ ռեզերվուարային դիմակներ: Վրանիկներ: CPAP-սարքավորումներ, դրանց համեմատական բնութագիրը, կիրառման գործնական հմտությունները, տանելիության և արդյունավետության գնահատումը
Շաբաթ 2 **Օր 1**	
10:00-11:30	**Դասախոսություն**

	Շնչափողի ինտուբացիա: Ցուցումները: Տեսակները: Դժվար ինտուբացիա: Շնչափողի ինտուբացիայի ընթացքում կիրառվող ժամանակակից սարքավորումները: Շնչափողի ինտուբացիայի առանձնահատկությունները շնչուղիների վիրուսային և բակտերիալ ախտահարումների դեպքում: Անհատական պաշտպանության միջոցների կիրառումը
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Բուժքրոջ դերը շնչափողի ինտուբացիայի ժամանակ: Պացիենտի նախապատրաստում: Անհրաժեշտ պարագաների նախապատրաստում: Ինտուբացիոն խողովակի ֆիքսում: Գործողության գրանցում քույրական խնամքի թերթիկում: Օգտագործված պարագաների մշակում: Անհատական պաշտպանության միջոցների կիրառումը շնչափողի ինտուբացիայի ժամանակ: Վարակային անվտանգության հարցերը
Օր 2	
10:00-11:30	**Դասախոսություն** Տրախեոստոմիա: Ցուցումները, հակացուցումները, տեսակները: Բուժքրոջ դերը բժշկի գործողությունների ժամանակ
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Տրախեոստոմիկ խողովակով պացիենտների խնամքը: Տրախեոստոմիկ խողովակների տեսակները, դրանց խնամքի առանձնահատկությունները: Պացիենտի և պարագաների նախապատրաստումը, ձեռքերի հիգիենան, վիրակապման հաճախականությունը և տեխնիկան, վիրակապության ընթացքում կիրառվող հականեխիչները, դրանց համեմատական բնութագիրը, խողովակի ֆիքսացիայի տեխնիկան 1 և 2 բուժքրոջ դեպքում
Օր 3	
10:00-11:30	**Դասախոսություն** Թոքերի արհեստական շնչառություն: Ցուցումները: Թոքերի ինվազիվ և ոչ ինվազիվ օդափոխություն: ԹԱՇ բարդությունները, դրանց կանխարգելումը քույրական խնամքի ընթացքում
11:30-12:00	Ընդմիջում
12:00-15:00	**Գործնական աշխատանք** Թոքերի արհեստական շնչառության հիմնական ռեժիմները, դրանց համեմատական բնութագիրը: ԹԱՇ հիմնական պարամետրերը: Ռեժիմների և պարամետրերի մոնիթորինգը և գրանցումը քույրական խնամքի թերթիկում: Գործնականում ԻԹԲ-ում արհեստական շնչառությամբ պացիենտների շնչական ռեժիմների և պարամետրերի քննարկում, փաստաթղթավարում
Օր 4	
10:00-11:30	**Դասախոսություն** ԹԱՇ հիվանդների խնամքի կազմակերպումը: Պացիենտների զննումը, մոնիթորինգը: Վարման կանոնակարգերը: Տարբեր պարամետրերի տագնապային ազդանշանների դեպքում իրավիճակի կառավարման քայլերը
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Շնչուղիների սանացիա: Շնչուղիների պարունակության արտածծման ցուցումները: Պացիենտի նախապատրաստումը: Անհրաժեշտ պարագաների

	նախապատրաստումը: Անհատական պաշտպանական միջոցները: Ձեռքերի հիգիենան: Պացիենտի անվտանգության ապահովումը: Շնչուղիների սանացիայի տեխնիկան բաց և փակ համակարգերով
Օր 5	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Շնչուղիների սանացիայի բարդությունները, դրանց կանխարգելումը և կառավարումը: Պարտադիր մոնիթորինգը շնչուղիների սանացիայի ժամանակ, ցուցանիշների վերծանումը: Շնչուղիների սանացիայի արդյունավետության գնահատումը
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Էքստուբացիա: Ցուցումները: Հետէքստուբացիոն մոնիթորինգ: Հնարավոր բարդությունները: Բժշկին տեղյակ պահելու իրավիճակները: Պատահական էքստուբացիա: Ինքնաէքստուբացիա: Պատճառները, կանխարգելումը, կառավարումը բուժքրոջ կողմից
Շաբաթ 3 **ԻԲԹ-ում բուժքույրական խնամքը շնչական մասնավոր պաթոլոգիաների դեպքում** **Օր 1**	
10:00-11:30	**Դասախոսություն** Սուր շնչական անբավարարություն: Թոքերի սուր վնասում
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Սուր շնչական անբավարարությամբ հիվանդների խնամքը: Թոքերի սուր վնասմամբ հիվանդների խնամքը: Պացիենտի մոնիթորինգը, գնահատումը, ախտորոշիչ հետազոտությունները, պացիենտների նախապատրաստումը հետազոտությանը, խնամքի կազմակերպումը: Բժշկին շտապ տեղեկացնելու իրավիճակները
Օր 2	
10:00-11:30	**Դասախոսություն** Սուր թոքաբորբ: Ասթմատիկ ստատուս: Թոքային էմբոլիզմ
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Սուր թոքաբորբով, ասթմատիկ ստատուսով, թոքային զարկերակի թրոմբոէմբոլիայով հիվանդների խնամքը: Պացիենտի մոնիթորինգը, գնահատումը, ախտորոշիչ հետազոտությունները, պացիենտների նախապատրաստումը հետազոտությանը, խնամքի կազմակերպումը: Բժշկին շտապ տեղեկացնելու իրավիճակները
Օր 3	
10:00-11:30	**Դասախոսություն** Կրծքավանդակի վնասվածքներ: Հիմնական ախտահարումները, կլինիկան, բուժումը, բարդությունները
11:30-12:00	Ընդմիջում
12:00-15:00	**Գործնական աշխատանք** Կրծքավանդակի վնասվածքներով հիվանդների խնամքը: Պացիենտի մոնիթորինգը, գնահատումը, ախտորոշիչ հետազոտությունները, պացիենտների

	նախապատրաստումը հետազոտությանը, խնամքի կազմակերպումը: Կրծքավանդակի դրենաժ: Ցուցումները: Բուժքրոջ դերը բժշկի գործողության ժամանակ: Դրենավորված պացիենտների խնամքը: Ակտիվ դրենավորման համակարգեր: Բժշկին շտապ տեղեկացնելու իրավիճակները
Օր 4	
10:00-11:30	**Դասախոսություն** COVID-19 պացիենտների խնամքը ԻԹԲ-ում
11:30-12:00	Ընդմիջում
12:00-15:00	**Գործնական աշխատանք** «Փորի վրա» դիրքի կիրառումը թոքերի սուր վնասմամբ պացիենտների մոտ: Ցուցումները, հակացուցումները: Պացիենտի նախապատրաստումը, ստուգաթերթիկի կիրառումը: «Փորի վրա» դիրքի ժամանակացույցի առանձնահատկությունները ակտիվ պացիենտների և ծանր պացիենտների մոտ: «Փորի վրա» դիրքի բարդությունները, դրանց կանխարգելումը և կառավարումը: «Փորի վրա» դիրքում պացիենտին ՍԹՎ իրականացման առանձնահատկությունները
Օր 5	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Ինտենսիվ թերապիայի բաժանմունքում շնչական բարդությունները, դրանց կանխարգելումը և կառավարումը: Շնչուղիների խցանում, ասպիրացիա, լարինգոսպազմ, կոկորդի այտուց, նեղացում, թոքերի այտուց, շնչուղիների արյունահոսություն, շնչուղիների պառկելախոցեր, խուղակներ, պատահական էքստուբացիա, թոքերի բարո- և վոլյումոտրավմաներ, օդափոխություն-կապակցված թոքաբորբեր, սարքավորումների հետ կապակցված բարդություններ: Դրանց կանխարգելումը և կառավարումը քույրական խնամքի ընթացքում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Մասնավոր դեպքերի քննարկում, գործնական հմտությունների գնահատում: Հետթեստ

Դասընթացավար՝ Հասմիկ Քոչարյան: